ԵԴ/36140/02/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19 սեպտեմբերի 2022 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Սամվել Մալխասյանի ընդդեմ Սեդրակ Խզրթյանի՝ վիճահարույց գործարքներն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Սամվել Մալխասյանը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 2020 թվականի դեկտեմբերի 25-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Սեդրակ Խզրթյանի, որով պահանջել է. *«անվավեր ճանաչել Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար Ս.Դանիելյանի կողմից 23.03.2015թ. վավերացված, թիվ 1307 համարի տակ սեղանամատյանում գրանցված Սեդրակ Ստեփանի Խզրթյանի և Սամվել Տիգրանի Մալխասյանի միջև կնքված փոխառության պայմանագիրը և Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար*

Ս.Դանիելյանի կողմից 24.03.2015թ. վավերացված, թիվ 1348 համարի տակ սեղանամատյանում գրանցված Սեդրակ Ստեփանի Խզրթյանի և Սամվել Տիգրանի Մալիասյանի միջև կնքված փոխառության պայմանագիրը, որպես 23.03.2015թ. և 24.03.2015թ կնքված պայմանագրերի անվավերության հետևանք անվավեր ճանաչել Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար Ս.Դանիելյանի կողմից 23.03.2015թ. վավերացված, թիվ 1308 համարի տակ սեղանամատյանում գրանցված Սեդրակ Ստեփանի Խզրթյանի և Սամվել Տիգրանի Մալիասյանի միջև կնքված ՀՀ Երևան քաղաքի Միլիկյան 5 փողոցի թիվ 52/2 բնակելի տան հիփոթեքի պայմանագիրը, այդ պայմանագրի հիման վրա կատարված գրավի իրավունքի պետական գրանցումը և Երևան քաղաքի Միլիկյան 5 փողոցի թիվ 52/2 բնակելի տան նկատմամբ Սեդրակ Ստեփանի Խզրթյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար Ս.Դանիելյանի կողմից 24.03.2015թ. վավերացված, թիվ 1349 համարի տակ սեղանամատյանում գրանցված Սեդրակ Ստեփանի Խզրթյանի և Արմեն Տիգրանի Մալիասյանի միջև կնքված ՀՀ, Երևան քաղաքի Միլիկյան 5 փողոցի թիվ 52 բնակելի տան հիփոթեքի պայմանագիրը, այդ պայմանագրի հիման վրա կատարված գրավի իրավունքի պետական գրանցումը և Երևան քաղաքի Միլիկյան 5 փողոցի թիվ 52 բնակելի տան նկատմամբ Սեդրակ Ստեփանի Խզրթյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը»:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Դատարան)՝ 2021 թվականի հունվարի 14-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Դատարանը (դատավոր՝ Ջ.Նախշքարյան), վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ և 25-րդ հոդվածները, ինչպես նաև «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, 2022 թվականի հունիսի 8-ին որոշում է կայացրել գործը ՀՀ սնանկության դատարանի (այսուհետ՝ նաև Սնանկության դատարան) քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) սույն գործով հայցվորը խնդրել է դատարանից անվավեր ճանաչել 23.03.2015 և 24.03.2015 թվականներին կնքված փոխառության պայմանագրերը և կիրառել անվավերության հետևանքներ: Այսինքն, սույն գործով վիճարկվում է թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործով 21.02.2020 թվականի վճռով սնանկ ճանաչված Սամվել Մալիասյանի գույքի կազմում ներառված գույքի Երևան քաղաքի Միլիկյան 5 փողոցի թիվ 52/2 բնակելի տան և իր հողամասի*

պարկանելիության (…) վերաբերյալ պայմանագիրը, որպիսի վեճը քննության է ենթակա սնանկության դատարանում»:

4. Թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործը 2022 թվականի օգոստոսի 29-ին մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Տ.Փոլադյանին:

4.1. Սնանկության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերը վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով (…):*

Այսինքն՝ թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործը հարուցվել է մինչև ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը, ուստի սույն սնանկության վարույթի նկատմամբ կիրառելի են մինչև վերը նշված օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նորմերը (…):

Մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում (…):

[Մ]ինչև 2020 թվականի ապրիլի 15-ը, մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը վերաբերում է պատասխանողին պատկանող գույքին (…):

Քննարկվող պարագայում Դատարանն արձանագրում է, որ ըստ ներկայացված հայցադիմումի բովանդակության, թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործով պարտապան

Սամվել Մալխասյանը թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործով հանդիսանում է որպես հայցվոր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործով հայցվոր է հանդիսանում թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործով պարտապան Սամվել Մալխասյանը, գտնում եմ, որ թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործը ենթակա չէ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված կարգով սնանկության գործի շրջանակներում քննության»:

5. Թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործով 2020 թվականի փետրվարի 21-ին կայացված վճռով Ստեփան Մալխասյանը սնանկ է ճանաչվել[1]:

6. Թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի սեպտեմբերի 12-ին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցերը հետևյալն են. *որո՞նք են թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու հարցի նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումները, և արդյո՞ք առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով ամրագրված նախապայմանները՝ թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար*:

8. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Դատարանի՝ թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործով 2021 թվականի հունվարի 14-ի որոշմամբ վարույթ է ընդունվել Սամվել Մալխասյանի հայցադիմումն ընդդեմ Սեդրակ Խզրթյանի՝ կողմերի միջև կնքված փոխառության պայմանագրերն անվավեր ճանաչելու, որպես դրանց անվավերության հետևանք հիփոթեքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված գրավի և սեփականության իրավունքի պետական գրանցումները անվավեր ճանաչելու պահանջների մասին,

- թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործով 2020 թվականի փետրվարի 21-ին կայացված վճռով Ստեփան Մալխասյանը սնանկ է ճանաչվել:

Վերոնշյալ փաստերից հետևում է, որ թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործը, որում հայցվոր է հանդիսանում թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործով սնանկ ճանաչված պարտապան Սամվել Մալխասյանը, հարուցվել է 2021 թվականի հունվարի 14-ին:

[1] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203857974

««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի «Սնանկության գործերի ենթակայությունը» վերտառությամբ 4-րդ հոդվածը, ուժի մեջ է մտել 2020 թվականի ապրիլի 15-ից: Այսինքն, թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործի հարուցման պահին արդեն իսկ գործել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքը՝ թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով կատարված լրացումներով և փոփոխություններով խմբագրությամբ:

Վերոգրյալից հետևում է, որ Դատարանը, գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին 2022 թվականի հունիսի 8-ի որոշումը կայացնելիս, իրավաչափորեն ղեկավարվել է տվյալ պահին գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով:

Ինչ վերաբերում է ««Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ Սնանկության դատարանի փաստարկներին, ապա հարկ է փաստել, որ նշված դրույթը վերաբերում է սնանկության գործերի վարումը կարգավորող օրենսդրությունը որոշելուն և կիրառելի չէ գործերի ենթակայությունը որոշելու հարցի նկատմամբ:

9. Անդրադառնալով այն հարցին, թե առկա են արդյո՞ք «Սնանկության մասին» ՀՀ օրենքով ամրագրված նախապայմանները՝ թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար՝ անհրաժեշտ է նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...): Սնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա*»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Մնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր)*»:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «*Ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան*»:

10. Սույն որոշման 9-րդ կետում վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն է սահմանված սնանկության գործերի համար, որոնց վարումն իրականացնում է Սնանկության դատարանը: Սնանկության դատարանը միաժամանակ իրականացնում է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

11. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ այն քաղաքացիական գործերը, որոնք հարուցվել են պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերի առնչությամբ, և ազդում են (կարող են ազդել) պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական

գործերի, պետք է քննվեն սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր:

Այսպիսով, քաղաքացիական գործը ենթակա է քննության սնանկության դատարանում սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ՝ հետևյալ նախապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) քաղաքացիաիրավական վեճը պետք է ծագած լինի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտների առնչությամբ,

բ) վեճի լուծումը պետք է ազդի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,

գ) սնանկության գործը պետք է գտնվի քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը պետք է ավարտված չլինի:

12. Տվյալ դեպքում թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործով հայցվոր է հանդիսանում Սամվել Մալխասյանը, ով թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործով ճանաչվել է սնանկ: Թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործով հայցի առարկան կողմերի միջև կնքված փոխառության պայմանագրերն անվավեր ճանաչելու, որպես դրանց անվավերության հետևանք հիփոթեքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված գրավի և սեփականության իրավունքի պետական գրանցումները անվավեր ճանաչելու պահանջներն են:

Նշված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործի ըստ էության քննության և վեճի լուծման արդյունքում որոշվելու է գույքային պատկանելության հարց: Այսինքն՝ վեճի լուծումը ազդեցություն է ունենալու Սամվել Մալխասյանի՝ որպես թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործով պարտապանի գույքի ծավալի վրա և ըստ այդմ՝ սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Հետևաբար, գտնում եմ, որ առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործը՝ Սնանկության դատարանում, թիվ ԵԴ/0393/04/18 սնանկության գործի շրջանակներում քննության առնելու համար անհրաժեշտ նախապայմանները:

Ավելին, հարկ է նաև նշել, որ թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի «*Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ*» վերտառությամբ 72-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված՝ նույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը նույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են դատարան»*:

Վկայակոչված իրավանորմի մեկնաբանությունից բխում է, որ թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով կատարված լրացումներով և փոփոխություններով «Սնանկության մասին» ՀՀ օրենքը գործողության մեջ դրվելուց հետո սնանկության գործի հետ կապված և դրա վրա ազդեցություն ունեցող քաղաքացիական գործերը պետք է փոխանցվեն ՀՀ սնանկության դատարան և քննվեն տվյալ սնանկության գործը քննող դատավորի վարույթում՝ որպես տվյալ սնանկության գործի շրջանակներում քննվող առանձին գործեր: Հետևաբար, եթե քննարկվող դրույթով սահմանված պահանջը վերաբերում է թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի ընդունման դրությամբ արդեն իսկ հարուցված քաղաքացիական գործերին՝ նպատակ ունենալով որոշակիացնել դրանց քննության հետագա կարգը, ապա այդ պահանջն ինքնըստինքյան վերաբերում է նաև օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված քաղաքացիական գործերին:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործը ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԴ/36140/02/20 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Սամվել Մալխասյանի ընդդեմ Սեդրակ Խզրյանի՝ վիճահարույց գործարքներն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ սնանկության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ